Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 29

Ֆինանսական հաշվետվությունները գերսղաճային տնտեսություններում[1]

Գործողության ոլորտը

1. **Սույն ստանդարտը պետք է կիրառվի ցանկացած կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների, ներառյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ, որի ֆունկցիոնալ արժույթը համարվում է գերսղաճային տնտեսության արժույթը:**

2. Գերսղաճային տնտեսությունում կազմակերպության գործունեության արդյունքների և ֆինանսական վիճակի վերաբերյալ այդ տնտեսության արժույթով արտահայտված հաշվետվություններն առանց վերահաշվարկման օգտակար չեն: Փողը կորցնում է գնողունակությունն այնպիսի տեմպերով, որ տարբեր ժամանակներում տեղի ունեցած գործառնություններից և դեպքերից ստացվող գումարների համեմատությունը դառնում է ապակողմնորոշիչ, նույնիսկ եթե այդ դեպքերը և գործարքները տեղի են ունեցել միևնույն հաշվետու ժամանակաշրջանում:

3. Սույն ստանդարտով չի սահմանվում սղաճի այն բացարձակ տեմպը (դրույքը), որով ենթադրվում է գերսղաճը: Դատողությունների խնդիր է, թե երբ է սույն ստանդարտի համաձայն առաջանում ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկման անհրաժեշտություն: Գերսղաճը ցուցանշվում է երկրի տնտեսական միջավայրի բնութագրերով, որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

   ա) բնակչության մեծամասնությունը գերադասում է իր խնայողությունները (հարստությունը) պահել ոչ դրամային ակտիվներով կամ համեմատաբար կայուն արտարժույթով: Տեղական արժույթով դրամական միջոցներն անմիջապես ներդրվում են՝ պահպանելու համար դրանց գնողունակությունը,

   բ) բնակչության մեծամասնությունը դրամական գումարները դիտարկում է ոչ թե տեղական արժույթով, այլ համեմատաբար ավելի կայուն արտարժույթով: Գները կարող են սահմանվել այդ արժույթով,

   գ) ապառիկ վաճառքները կամ գնումները տեղի են ունենում այնպիսի գներով, որոնք փոխհատուցում են ապառքի ժամանակաշրջանում գնողունակության անկումից ակնկալվող վնասները, նույնիսկ եթե այդ ժամանակաշրջանը կարճատև է,

   դ) տոկոսադրույքները, աշխատավարձերը և գները կախվածության մեջ են դրված գների ինդեքսից, և

[1] Որպես 2008 թվականի մայիսին հրապարակված «*ՖՀՄՍ-ների Բարեփոխումների*» մաս՝ Խորհուրդը փոփոխեց ՀՀՄՍ 29-ում օգտագործված տերմինները՝ դրանք ավելի համահունչ դարձնելու այլ ՖՀՄՍ-ների հետ: Մասնավորապես՝ (ա) «շուկայական արժեքը» տերմինը փոխարինվեց «իրական արժեք» տերմինով, և (բ) «գործունեության արդյունքներ» ուև «զուտ եկամուտ» տերմինները փոխարինվեցին «շահույթ կամ վնաս» տերմինով

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ե) երեք տարվա ընթացքում սղաճի կուտակային տեմպը մոտենում է 100 տոկոսին կամ գերազանցում է այն:

4. Նախընտրելի է, որ բոլոր կազմակերպությունները, որոնք իրենց հաշվետվությունները ներկայացնում են նույն գերսղաճային տնտեսության արժույթով, սույն ստանդարտը կիրառեն նույն ամսաթվից սկսած: Այնուհանդերձ, սույն ստանդարտը կիրառվում է ցանկացած կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ հաշվետու ժամանակաշրջանի սկզբից, որտեղ կազմակերպությունը հատկորոշում է այն երկրի գերսղաճային լինելու փաստը, որի արժույթով հաշվետվություն է ներկայացնում:

Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

5. Ժամանակի ընթացքում գները փոփոխվում են յուրահատուկ կամ ընդհանուր քաղաքական, տնտեսական, սոցիալական պայմանների ազդեցության հետևանքով: Յուրահատուկ պայմանները, ինչպիսիք են պահանջարկի և առաջարկի, ինչպես նաև տեխնոլոգիական փոփոխությունները, միմյանցից անկախ կարող են առաջացնել առանձին գների զգալի աճ կամ անկում: Բացի այդ, ընդհանուր պայմանները կարող են հանգեցնել գների ընդհանուր մակարդակի փոփոխությունների և, հետևաբար, փողի ընդհանուր գնողունակության փոփոխության:

6. Ֆինանսական հաշվետվությունները հաշվապահական հաշվառման սկզբնական արժեքի հիմունքով պատրաստող կազմակերպությունները չեն դիտարկում ոչ գների ընդհանուր մակարդակի փոփոխությունները, ոչ էլ ճանաչված ակտիվների և պարտավորությունների յուրահատուկ գների աճը: Բացառություն են կազմում այն ակտիվները և պարտավորությունները, որոնք կազմակերպությունն ընտրել է, կամ նրանից պահանջվում է չափել իրական արժեքով: Օրինակ՝ հիմնական միջոցները կարող են վերագնահատվել իրական արժեքով, իսկ կենսաբանական ակտիվների համար՝ հիմնականում պահանջվում է չափել իրական արժեքով: Այնուամենայնիվ, որոշ կազմակերպություններ ներկայացնում են ֆինանսական հաշվետվություններ ընթացիկ արժեքի մոտեցման հիման վրա, որը արտացոլում է առկա ակտիվների յուրահատուկ գների փոփոխությունների ազդեցությունները:

7. Գերսղաճային տնտեսությունում ֆինանսական հաշվետվությունները՝ անկախ այն բանից՝ դրանք հիմնված են սկզբնական արժեքի, թե ընթացիկ (վերականգնման) արժեքի մոտեցման վրա, օգտակար են միայն այն դեպքում, երբ դրանք արտահայտված են հաշվետու ամսաթվի դրությամբ ընթացիկ չափման միավորով: Արդյունքում սույն ստանդարտը կիրառվում է գերսղաճային տնտեսության արժույթով հաշվետվություններ պատրաստող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ: Սույն ստանդարտով պահանջվող տվյալների ներկայացումը՝ որպես չվերահաշվարկված ֆինանսական հաշվետվությունների հավելված, չի թույլատրվում:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

Ավելին՝ ֆինանսական հաշվետվությունների առանձին ներկայացումը մինչև վերահաշվարկումը ընդունելի չէ:

8. Այն կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները, որոնց ֆունկցիոնալ արժույթը գերսղաճային տնտեսության արժույթ է՝ անկախ այն բանից, թե այդ ֆինանսական հաշվետվությունները հիմնված են սկզբնական արժեքի, թե ընթացիկ արժեքի մոտեցման վրա, պետք է ներկայացվեն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ընթացիկ չափման միավորով: Նախորդ ժամանակաշրջանի համադրելի ցուցանիշները, որոնք պահանջվում են *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* ՀՀՄՍ 1-ով (վերանայված՝ 2007 թվականին), ինչպես նաև նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող ցանկացած տեղեկատվություն, նույնպես պետք է արտահայտվեն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ընթացիկ չափման միավորով: Այլ ներկայացման արժույթով համադրելի գումարները ներկայացնելու նպատակով կիրառվում են *«Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները»* ՀՀՄՍ 21-ի 42(բ) և 43-րդ պարագրաֆները:

9. Զուտ դրամային դիրքի օգուտը կամ կորուստը պետք է ներառվի շահույթում կամ վնասում և բացահայտվի առանձին:

10. Սույն ստանդարտի համաձայն՝ ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումը պահանջում է կիրառել որոշ ընթացակարգեր և անել դատողություններ: Նշված ընթացակարգերի և դատողությունների հետևողական կիրառումը ժամանակաշրջանից ժամանակաշրջան ավելի կարևոր է, քան վերահաշվարկված ֆինանսական հաշվետվություններում ներառված արդյունքային գումարների մանրամասն ճշգրտումը:

Ֆինանսական հաշվետվություններ սկզբնական արժեքով

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

11. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության գումարները, որոնք արտահայտված չեն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ընթացիկ չափման միավորով, վերահաշվարկվում են՝ կիրառելով գների ընդհանուր ինդեքսը:

12. Դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում, քանի որ դրանք արդեն արտահայտված են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ընթացիկ դրամական միավորով: Դրամային հոդվածները դրամական միջոցներն են և այն հոդվածները, որոնք պետք է ստացվեն կամ վճարվեն դրամական միջոցներով:

13. Ակտիվներն ու պարտավորությունները, որոնք պայմանագրով կապված են գների փոփոխությունների հետ, ինչպիսիք են ինդեքսավորվող պարտատոմսերը և փոխառությունները, ճշգրտվում են պայմանագրին համապատասխան, որպեսզի որոշվի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չմարված գումարը: Այս հոդվածները, տվյալ ճշգրտված գումարներով, հաշվառվում են վերահաշվարկված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

14. Բոլոր այլ ակտիվները և պարտավորությունները ոչ դրամային են: Որոշ ոչ դրամային հոդվածներ հաշվառվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ընթացիկ գումարներով, ինչպիսիք են իրացման զուտ արժեքը և իրական արժեքը, որի պատճառով դրանք չեն վերահաշվարկվում: Բոլոր այլ ոչ դրամային ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են:

15. Ոչ դրամային հոդվածների մեծամասնությունը հաշվառվում են ինքնարժեքով կամ ինքնարժեքով՝ հանած մաշվածությունը. հետևաբար, դրանք արտահայտված են դրանց ձեռքբերման պահին ընթացիկ գումարներով: Յուրաքանչյուր հոդվածի վերահաշվարկված ինքնարժեքը կամ (ինքնարժեք հանած մաշվածությունը) որոշվում է՝ դրա սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության նկատմամբ կիրառելով ձեռքբերման պահից մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջն ընկած ժամանակահատվածում գների ընդհանուր ինդեքսի փոփոխությունը: Օրինակ՝ հիմնական միջոցները, հումքի և ապրանքների պաշարները, գուդվիլը, պատենտները, առևտրային նշանները և նմանատիպ ակտիվները վերահաշվարկվում են դրանց գնման ամսաթվերից: Անավարտ արտադրանքի և պատրաստի արտադրանքի պաշարները վերահաշվարկվում են այն ամսաթվերից, երբ առաջացել են դրանց գնման և վերամշակման ծախսումները:

16. Հիմնական միջոցների առանձին տեսակների ձեռքբերման ամսաթվերի մանրամասն գրանցումները կարող են առկա չլինել, կամ հնարավոր չլինի դրանք գնահատել: Այսպիսի հազվագյուտ դեպքերում սույն ստանդարտի կիրառման սկզբնական շրջանում կարող է անհրաժեշտ լինել օգտագործել հոդվածների արժեքի անկախ մասնագիտական գնահատում՝ որպես դրանց վերահաշվարկման հիմք:

17. Գների ընդհանուր ինդեքսը կարող է բացակայել այն ժամանակաշրջանների համար, որոնք անհրաժեշտ են հիմնական միջոցների վերահաշվարկման համար, ինչպես պահանջում է սույն ստանդարտը: Նման հանգամանքներում կարող է անհրաժեշտ լինել օգտագործել գնահատում, որը հիմնված է, օրինակ՝ ֆունկցիոնալ արժույթի և համեմատաբար կայուն արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների վրա:

18. Որոշ ոչ դրամային հոդվածներ հաշվառվում են ձեռքբերման ամսաթվից կամ տվյալ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվից տարբեր ամսաթվերին ընթացիկ գումարներով, օրինակ՝ հիմնական միջոցները վերագնահատվել են ավելի վաղ ամսաթվի դրությամբ: Այսպիսի դեպքերում հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է վերագնահատման ամսաթվից:

19. Ոչ դրամային հոդվածի վերահաշվարկված գումարը նվազեցվում է՝ համաձայն համապատասխան ՖՀՄՍ-ների, երբ այն գերազանցում է հոդվածի ապագա օգտագործումից (ներառյալ վաճառքը կամ այլ օտարումը) ստացվող փոխհատուցվող գումարը: Օրինակ՝ հիմնական միջոցների, գուդվիլի, պատենտների և ապրանքային նշանների վերահաշվարկված գումարները նվազեցվում են մինչև դրանց փոխհատուցվող գումարները, պաշարների վերահաշվարկված գումարները նվազեցվում են մինչև դրանց իրացման զուտ արժեքը:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

20. Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտը կարող է հաշվետու լինել գերսղաճային տնտեսության արժույթով: Այդ ներդրման օբյեկտի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը վերահաշվարկվում են սույն ստանդարտին համապատասխան, որպեսզի հաշվարկվի նրա զուտ ակտիվներում և շահույթում կամ վնասում ներդրողի բաժնեմասը: Երբ ներդրման օբյեկտի վերահաշվարկված ֆինանսական հաշվետվությունները արտահայտված են արտարժույթով, դրանք փոխարկվում են փակման փոխարժեքով:

21. Փոխառության ծախսումներում սովորաբար հաշվի է առնվում սղաճի ազդեցությունը: Տեղին չէ միաժամանակ և՛ վերահաշվարկել փոխառու միջոցների հաշվին ֆինանսավորվող կապիտալ ծախսումները, և՛ կապիտալացնել փոխառության ծախսումների այն մասը, որը նույն ժամանակաշրջանի ընթացքում փոխհատուցում է սղաճը: Փոխառության ծախսումների այդ մասը ճանաչվում է ծախս այն ժամանակաշրջանի ընթացքում, երբ դրանք առաջացել են:

22. Կազմակերպությունները կարող են ձեռք բերել ակտիվներ այնպիսի պայմաններով, որը նրանց թույլ է տալիս հետաձգելու վճարումը՝ առանց բացահայտ տոկոսային ծախսեր կրելու: Այն դեպքերում, երբ հնարավոր չէ որոշել թաքնված տոկոսային գումարը, նշված ակտիվները վերահաշվարկվում են ոչ թե գնման, այլ վճարման ամսաթվից:

23. [Հանված է]

24. Սույն ստանդարտի կիրառման առաջին ժամանակաշրջանի սկզբի դրությամբ սեփական կապիտալի տարրերը, բացառությամբ չբաշխված շահույթի և վերագնահատումներից առաջացած արժեքի աճի, վերահաշվարկվում են՝ կիրառելով գների ընդհանուր ինդեքսը այն ամսաթվերից, երբ տարրերը ներդրվել կամ այլ կերպ առաջացել են: Վերագնահատումներից արժեքի աճը, որն առաջացել է նախորդ ժամանակաշրջաններում, բացառվում է: Վերահաշվարկված չբաշխված շահույթը ստացվում է վերահաշվարկված ֆինանսական վիճակի հաշվետվության բոլոր այլ գումարների հիման վրա:

25. Առաջին ժամանակաշրջանի վերջի դրությամբ և հաջորդող ժամանակաշրջաններում սեփական կապիտալի բոլոր տարրերը վերահաշվարկվում են՝ կիրառելով գների ընդհանուր ինդեքսը ժամանակաշրջանի սկզբից կամ ներդրման ամսաթվից, եթե վերջինս ավելի ուշ է: Սեփական կապիտալում փոփոխությունները բացահայտվում են ՀՀՄՍ 1-ին համապատասխան:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

26. Սույն ստանդարտը պահանջում է, որ ամբողջական շահույթների և վնասների մասին հաշվետվության բոլոր հոդվածները արտահայտվեն ընթացիկ չափման միավորով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Հետևաբար, բոլոր գումարներն անհրաժեշտ է վերահաշվարկել՝ կիրառելով գների ընդհանուր ինդեքսի փոփոխությունը

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

այն ամսաթվերից, որոնց դրությամբ եկամուտները կամ ծախսերը ենթակա էին գրանցման:

Զուտ դրամային դիրքի օգուտ կամ կորուստ

27. Սղաճի ժամանակաշրջանում կազմակերպությունը, որի դրամային ակտիվները գերազանցում են դրամային պարտավորությունները, կորցնում է գնողունակությունը, իսկ այն կազմակերպությունը, որի դրամային պարտավորությունները գերազանցում են նրա դրամային ակտիվները, բարձրացնում է իր գնողունակությունը՝ այնքանով, որքանով ակտիվները և պարտավորությունները կապված չեն գների մակարդակի հետ: Զուտ դրամային դիրքի այսպիսի օգուտը կամ կորուստը կարող է գոյանալ որպես տարբերություն, որն առաջանում է ոչ դրամային ակտիվների, սեփական կապիտալի, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության հոդվածների վերահաշվարկումից և ինդեքսավորվող ակտիվների ու պարտավորությունների ճշգրտումից: Նշված օգուտը կամ կորուստը կարելի է գնահատել՝ ժամանակաշրջանի դրամային ակտիվների և դրամային պարտավորությունների միջև տարբերության միջին կշռվածի նկատմամբ՝ կիրառելով գների ընդհանուր ինդեքսի փոփոխությունը:

28. Զուտ դրամային դիրքի օգուտը կամ կորուստը ներառվում է շահույթում կամ վնասում: Պայմանագրով համաձայնեցված դեպքերում գների փոփոխությունների հետ կապված ակտիվների և պարտավորությունների՝ 13-րդ պարագրաֆին համապատասխան իրականացված ճշգրտումը հաշվանցվում է զուտ դրամային դիրքի օգուտի կամ կորստի դիմաց: Եկամուտների և ծախսերի այլ հոդվածները, ինչպիսիք են ներդրված և փոխ առնված միջոցների հետ կապված տոկոսային եկամուտն ու ծախսը և արտարժույթի փոխարժեքային տարբերությունները, նույնպես առնչվում են զուտ դրամային դիրքի հետ: Թեև այդպիսի հոդվածները բացահայտվում են առանձին, օգտակար կլիներ, եթե դրանք համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացվեին զուտ դրամային դիրքի օգուտի կամ կորստի հետ միասին:

Ֆինանսական հաշվետվություններ ընթացիկ արժեքով

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

29. Ընթացիկ արժեքով ներկայացված հոդվածները չեն վերահաշվարկվում, որովհետև դրանք արդեն իսկ արտահայտված են ընթացիկ չափման միավորով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության այլ հոդվածները վերահաշվարկվում են 11-25-րդ պարագրաֆներին համապատասխան:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

30. Ընթացիկ արժեքով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը մինչև վերահաշվարկումը ընդհանրապես ցույց է տալիս ծախսումները, որոնք ընթացիկ էին, երբ կատարվել են դրանց հիմքում ընկած համապատասխան գործարքները կամ դեպքերը: Վաճառված արտադրանքի, ապրանքների, աշխատանք-

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

ների և ծառայությունների ինքնարժեքը, ինչպես նաև մաշվածությունը գրանցվում են ընթացիկ արժեքով՝ սպառման պահին, իսկ վաճառքից հասույթը և այլ ծախսերը՝ դրանց առաջացման պահին՝ իրենց դրամական գումարներով: Հետևաբար, բոլոր գումարներն անհրաժեշտ է վերահաշվարկել ընթացիկ չափման միավորով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կիրառելով գների ընդհանուր ինդեքսը:

Զուտ դրամային դիրքի օգուտ կամ կորուստ

31. Զուտ դրամային դիրքի օգուտը կամ կորուստը հաշվառվում է՝ համաձայն 27-րդ և 28-րդ պարագրաֆների:

Հարկեր

32. Սույն ստանդարտի համաձայն՝ ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումը կարող է տարբերություններ առաջացնել որոշակի ակտիվների և պարտավորությունների ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ հաշվեկշռային արժեքի և հարկային բազաների միջև: Այդպիսի տարբերությունները հաշվառվում են *«Շահութահարկեր»* ՀՀՄՍ 12-ի համաձայն:

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

33. Սույն ստանդարտը պահանջում է, որ դրամական հոսքերի մասին հաշվետվության բոլոր հոդվածներն արտահայտվեն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ընթացիկ չափման միավորով:

Համադրելի ցուցանիշներ

34. Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշները՝ անկախ դրանց սկզբնական արժեքի կամ ընթացիկ արժեքի մոտեցման վրա հիմնված լինելուց, վերահաշվարկվում են՝ կիրառելով գների ընդհանուր ինդեքսը այնպես, որ համադրելի ֆինանսական հաշվետվությունները ներկայացվեն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ընթացիկ չափման միավորով: Ավելի վաղ ժամանակաշրջաններին վերաբերող բացահայտման ենթակա տեղեկատվությունը նույնպես արտահայտվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ընթացիկ չափման միավորով: Այլ ներկայացման արժույթով համադրելի գումարները ներկայացնելու նպատակով կիրառվում են ՀՀՄՍ 21-ի 42(բ) և 43-րդ պարագրաֆները:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

35. Մայր կազմակերպությունը, որը հաշվետվություններ է ներկայացնում գերսղաճային տնտեսության արժույթով, կարող է ունենալ դուստր կազմակերպություններ, որոնք նույնպես հաշվետու են գերսղաճային տնտեսությունների արժույթներով: Յուրաքանչյուր այդպիսի դուստր կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները, մինչև դրանց մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվությունը-

ներում ներառվելը, պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով այն երկրի գների ընդհանուր ինդեքսը, որի արժույթով նա հաշվետու է: Երբ այդպիսի դուստր կազմակերպությունը օտարերկրյա է, նրա վերահաշվարկված ֆինանսական հաշվետվությունները փոխարկվում են փակման փոխարժեքով: Դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները, որոնք պատրաստված չեն գերսղաճային տնտեսությունների արժույթով, դիտարկվում են ՀՀՄՍ 21-ին համապատասխան:

36. Տարբեր հաշվետու ժամանակաշրջանների վերջ ունեցող ֆինանսական հաշվետվությունների համախմբման դեպքում բոլոր հոդվածները՝ լինեն դրանք դրամային, թե ոչ դրամային, պետք է վերահաշվարկվեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ընթացիկ չափման միավորով:

Գների ընդհանուր ինդեքսի ընտրությունը և օգտագործումը

37. Ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումը սույն ստանդարտի համաձայն պահանջում է գների ընդհանուր ինդեքսի կիրառում, որն արտացոլում է ընդհանուր գնողունակության փոփոխությունները: Գերադասելի է, որպեսզի բոլոր կազմակերպությունները, որոնք հաշվետու են նույն տնտեսության արժույթով, կիրառեն միևնույն ինդեքսը:

Տնտեսություններ, որոնք դադարում են գերսղաճային լինելուց

38. Երբ տնտեսությունը դադարում է գերսղաճային լինելուց, և կազմակերպությունը դադարեցնում է իր ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը սույն ստանդարտի համաձայն, նա պետք է նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ընթացիկ չափման միավորով արտահայտված գումարները դիտարկի որպես հիմք հաշվեկշռային արժեքների համար՝ իր հետագա ֆինանսական հաշվետվություններում:

Բացահայտումներ

39. Կազմակերպությունը պետք է կատարի հետևյալ բացահայտումները՝

ա) այն փաստը, որ ֆինանսական հաշվետվությունները և նախորդ ժամանակաշրջանների համապատասխան ցուցանիշները վերահաշվարկվել են՝ հաշվի առնելով ֆունկցիոնալ արժույթի ընդհանուր գնողունակության փոփոխությունները, և, որպես արդյունք, ներկայացված են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ընթացիկ չափման միավորով,

բ) ֆինանսական հաշվետվությունների՝ սկզբնական կամ ընթացիկ արժեքի մոտեցման վրա հիմնված լինելը, և

գ) կիրառված գների ինդեքսը և դրա մակարդակը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ինչպես նաև ինդեքսի փոփոխությունը ընթացիկ և նախորդ հաշվետու ժամանակաշրջանների ընթացքում:

40. Սույն ստանդարտով պահանջվող բացահայտումներն անհրաժեշտ են, որպեսզի պարզաբանվի այն հիմքը, որով արտացոլվել են սղաճի հետևանքները ֆինանսական հաշվետվություններում: Դրանք նաև նպատակ են հետապնդում տրամադրել այլ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է՝ այդ հիմքը և արդյունքային գումարները հասկանալու համար:

Ուժի մեջ մտնելը

41. Սույն ստանդարտը գործողության մեջ է դրվում 1990 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ֆինանսական հաշվետվությունների համար:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ